ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2024 **թվական** N 269-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՎՈՆ ԿՈԼՅԱՅԻ ՄԱԼՈՅԱՆԻՆ, ՖԼՈՐԱ ԳՐԻԳՈՐԻ ՄԱԼՈՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Լևոն Կոլյաի Մալոյանը (անձնագիր՝ BA 1887542, տրված՝ 10.11.2015թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Տ.Ճարտարապետի 2 շենք 29 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի նոյեմբերի 13-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Տ.Ճարտարապետի 2 շենք թիվ 29 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1994 թվականի օգոստոսի 19-ի թիվ 15 որոշմամբ Տրդատ Ճարտարապետի փողոց 2 շենք թիվ 29 հասցեի բնակարանը հատկացվել է Կոլյա Հովհաննեսի Մալոյանի 6 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, տղային, հարսին, 3 թոռանը:

Քաղաքացի Կոլյա Հովհաննեսի Մալոյանը մահացել է 2010 թվականի մարտի 3-ին (հիմք՝ II-ՍՒ N 675292 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1994 թվականի օգոստոսի 19-ի թիվ 15 որոշմամբ տրված թիվ 29 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 230168016812, 2023 թվականի հոկտեմբերի 27-ի «Նոր Անի» համատիրության «002» 05 տեղեկանքները, Լևոն Կոլյաի Մալոյանի անձնագրի պատճենը, Լևոն Կոլյաի Մալոյանի, Ֆլորա Գրիգորի Մալոյանի, Սեդա Լևոնի Մալոյանի, Կարեն Լևոնի Մալոյանի, Կոլյա Լևոնի Մալոյանի լիազորագրերը Գյումրի համայնքից Տրդատ Ճարտարապետի 2 շենք թիվ 29 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի նոյեմբերի 13-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետի՝ լսումներն իրականացվել են առանց քաղաքացի Լևոն Կոլյաի Մալոյանի լիազորված անձ՝ Գուրգեն Ռազմիկի Մալոյանի մասնակցության, քանի որ լսումներին չի ներկայացել:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

### 1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Համայնք Գյումրի Տրդատ Ճարտարապետի 2 շենք, թիվ 29 հասցեի 96.41 (իննսունվեց ամբողջ քառասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1055781 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետի փողոց 2 շենք թիվ 29 հասցեի բնակարանը 1994 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1994 թվականի օգոստոսի 19-ի թիվ 15 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Տ.Ճարտարապետի փողոց 2 շենք թիվ 29 հասցեում հաշվառված են քաղաքացիներ՝ Ֆլորա Գրիգորի Մալոյանը 1991 թվականից,Դավիթ Գրիշայի Մալոյանը 2001 թվականից, Լևոն Կոլյայի Մալոյանը 2007 թվականից, Սեդա Լևոնի Մալոյանը 2007թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N 230168016812 տեղեկանք, 2023 թվականի հոկտեմբերի 27-ի «Նոր Անի» համատիրության « 002» 05 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Ֆլորա Գրիգորի Մալոյանի, Լևոն Կոլյաի Մալոյանի, Սեդա Լևոնի Մալոյանի, Կարեն Լևոնի Մալոյանի, Կոլյա Լևոնի Մալոյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոնշյալ քաղաքացիների կողմից 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 10-ի N ԱՏ-10112023-99-0611, N ԱՏ-10112023-99-0624, N ԱՏ-10112023-99-0625 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Լևոն Կոլյաի Մալոյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետի փողոց 2 շենք թիվ 29 հասցեի բնակարանը վարձակալել է 1994 թվականի օգոստոսի 19-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

### 2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել

ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սեդա Լևոնի Մալոյանը, Կարեն Լևոնի Մալոյանը, Կոլյա Լևոնի Մալոյանը հանդիսանում են ՌԴ քաղաքացիներ՝ վարչական մարմինը քաղաքացի Լևոն Կոլյաի Մալոյանի դիմումը բավարարեց մասամբ:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Համայնք Գյումրի Տրդատ Ճարտարապետի 2 շենք, թիվ 29 հասցեի 96.41 (իննսունվեց ամբողջ քառասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

   1) Լևոն Կոլյաի Մալոյանին ծնված՝ 1956 թվականին,
   2) Ֆլորա Գրիգորի Մալոյանին ծնված՝ 1959 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Լևոն Կոլյաի Մալոյանին, Ֆլորա Գրիգորի Մալոյանին:
3. Քաղաքացներ՝ Լևոն Կոլյաի Մալոյանին, Ֆլորա Գրիգորի Մալոյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Լևոն Կոլյաի Մալոյանին, Ֆլորա Գրիգորի Մալոյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2024թ. Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<30>> հունվարի 2024 թվականի N 248-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՆՈՒԿԻ ՄԽՉՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Կարապետ Մանուկի Մխչյանի 2024 թվականի հունվարի 30-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Գյումրի համայնքի զարգացման և ներդրումային ծրագրի փորձագետ Կարապետ Մանուկի Մխչյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի օգոստոսի 1-ը ներառյալ:

**2.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարապետ Մանուկի Մխչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.01.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունվարի 2024 **թվականի** N 247-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԵՆԱ ՌԱԶՄԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ, ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Լենա Ռազմիկի Ոսկանյանը (անձնագիր՝AS 0357169, տրված՝ 03.09.2018թ., 016-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Կ.Դեմիրճյան փող. 83 տուն հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի նոյեմբերի 15-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Կ.Դեմիրճյան փողոց 83/4 հասցեի բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 2027-Ա որոշմամբ անվավեր է ճանաչվել Գյումրի համայնքի Կ.Դեմիրճյան փողոց N 83/1 հասցեի բնակելի տունը «Քաղաքացիներ Լենա Ռազմիկի Ոսկանյանին, Արթուր Վարուժանի Ոսկանյանին նվիրատվության եղանակով օտարելու մասին» Գյումրի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 7-ի թիվ 321-Ա որոշումը:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2019 թվականի դեկտեմբերի 12-ի Շ-4015 գրությունը, 2023 թվականի դեկտեմբերի 11-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-1053 գրությունը, «Գյումրու բնակարանների սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի տեղեկանքը, Լենա Ռազմիկի Ոսկանյանի,Արթուր Վարուժանի Ոսկանյանի անձնագրերի պատճենները, 2023 թվականի նոյեմբերի 22-ի «Գյումրի» ցանցի տեղեկանքը, 2019 թվականի սեպտեմբերի 25-ի Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության եզրակացությունը, Հովհաննես Վարուժանի Ոսկանյանի հայտարարությունը Գյումրի համայնքից Դեմիրճյան փողոց թիվ 83/4 հասցեի բնակելի տունը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ, Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 2027-Ա որոշումը, Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 2456-Ա որոշումը, ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ5/0137/05/21վարչական գործով 2022 թվականի մարտի 17-ի վճռի պատճենը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի,14-րդ, 19-րդ հոդվածների,

30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի նոյեմբերի 15-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Լենա Ռազմիկի Ոսկանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրենց վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Կ.Դեմիրճյան փողոց N 83/4 հասցեի 18.95 (տասնութ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 07112023-08-0042 վկայական):

բ) Գյումրու/Լենինականի/ Կ.Դեմիրճյան փողոց N 83 ֆոնդի տան վերաբերյալ տվյալներ արխիվում չեն պահպանվում (հիմք ՝«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2019 թվականի դեկտեմբերի 12-ի Շ-4015 գրություն):

գ) Քաղաք Գյումրի, Կ.Դեմիրճյան փողոց N 83/1 բնակելի տունը հասցեագրությամբ անշարժ գույքը երկու մասի բաժանելու նպատակով տրամադրվել է հասցեներ՝

1. 20.90 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք. Կ. Դեմիրճյան փողոց N 83/3
2. 26.67 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք. Կ. Դեմիրճյան փողոց N 83/4 (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 2218-Ա որոշում):

դ) Գյումրի համայնքի Կ.Դեմիրճյան փողոց N 83 հասցեի տանը հաշվառված բնակվում են քաղաքացիներ՝ Լենա Ռազմիկի Ոսկանյանը 1994 թվականից, Հովհաննես Վարուժանի Ոսկանյանը 1999 թվականից, Արթուր Վարուժանի Ոսկանյանը 1999 թվականից, հաշվառված է նաև այլ ընտանիք՝ Ասպրամ Գեղամի Ոսկանյանը 1986 թվաակնից Գարեգին Գագիկի Ոսկանյանը 2008 թվականից, Հայկ Գագիկի Ոսկանյանը 2007 թվականից (հիմք՝ 2023 թվականի դեկտեմբերի 18-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-1053 գրություն, «Գյումրու բնակարանների սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N 2937 տեղեկանք):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ Արթուր Վարուժանի Ոսկանյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: Լենա Ռազմիկի Ոսկանյանի անվամբ Շիրակի մարզ համայնք Գյումրի ք.Ֆուրմանովի փողոց 1 նրբանցք 22 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք /բաժնեմասը՝ 9/20/: 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ համայնք Գյումրի ք.Ֆուրմանովի փողոց 1 նրբանցք 22 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ( հիմք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N ԱՏ-23122023-99-0132, N ԱՏ-27122023-99-0160 տեղեկանքներ):

զ) Քաղաքացի Ասպրամ Ոսկանյանը «ՀԷՑ» ՓԲԸ «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» էլեկտրական ցանցում բաժանորդ է 2002թվականից մինչև օրս (հիմք՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի նոյեմբերի 22-ի տեղեկանք):

է) Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 83 հասցեում գտնվող ընդհանուր տնատիրության Լենա Ռազմիկի Ոսկանյանին պատկանող բաժնեմասի վնասվածությունը Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության եզրակացության համաձայն գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար (հիմք՝ անհատ ձեռնարկատեր Սեդրակ Մուրադյանի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի եզրակացություն):

ը) Քաղաքացի Լենա Ռազմիկի Ոսկանյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Լենա Ռազմիկի Ոսկանյանի դիմումը բավարարեց :

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների, դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Կ.Դեմիրճյան փողոց N 83/4 հասցեի 18.95 (տասնութ ամբողջ իննսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

    1) Լենա Ռազմիկի Ոսկանյանին ծնված՝ 1961 թվականին,

    2) Արթուր Վարուժանի Ոսկանյանին ծնված՝ 1982 թվականին

    որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Լենա Ռազմիկի Ոսկանյանին, Արթուր Վարուժանի Ոսկանյանին:
3. Քաղաքացիներ՝ Լենա Ռազմիկի Ոսկանյանին ,Արթուր Վարուժանի Ոսկանյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Լենա Ռազմիկի Ոսկանյանին ,Արթուր Վարուժանի Ոսկանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

**2024թ. Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունվարի 2024 **թվական** N 246-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼՈՒՍՅԱ ԲԱՐՍԵՂԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ, ՎԱՐԴՈՒՀԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՍԵՐԱՐԴԱՐՅԱՆԻՆ, ՎԻՈԼԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՍԵՐԱՐԴԱՐՅԱՆԻՆ, ՄԱՐԻԱՆՆԱ ԻՎԱՆՈՎՆԱ ՉԻԳԱՐԵՎԱՅԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմեն Ջուլբերտի Խոցանյանը (նույնականացման քարտ՝ 006166698, տրված՝ 18.07.2017թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Խորենացու 26 շենք 48 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Լուսյա Բարսեղի Թորոսյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի դեկտեմբերի 5-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Ռասկատլյան փողոց 1 շենք թիվ 34 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2012 թվականի մայիսի 18-ի թիվ 1205-Ա որոշմամբ Ռասկատլյան փողոց 1 շենք թիվ 34 հասցեի բնակարանը հատկացվել է Համբարձում Ավետիքի Սերարդարյանի վեց անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 աղջկան, քրոջ աղջկան, քրոջ տղային և տրվել թիվ 34 միասնական օրդերը:

Քաղաքացի՝ Համբարձում Ավետիքի Սերարդարյանը մահացել է (հիմք՝ ԲԱ 110122 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2012 թվականի մայիսի 18-ի թիվ 1205-Ա որոշմամբ տրված թիվ 34 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 16-ի N 230643064640 տեղեկանքը, 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Արատտա» համատիրության Ե/020/23 տեղեկանքը, Վյաչեսլավ Չիգարևի կացության քարտի պատճենը, Լուսյա Բարսեղի Թորոսյանի,Վարդուհի Համբարձումի Սերարդարյանի, Վիոլետա Համբարձումի Սերարդարյանի, Մարիաննա Իվանովնա Չիգարևայի լիազորագրերը Գյումրի համայնքից Ռասկատլյան փողոց 1 շենք թիվ 34 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների,

30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի դեկտեմբերի 5-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Լուսյա Բարսեղի Թորոսյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Ռասկատյան փողոց 1 շենք, թիվ 34 հասցեի 85.66 (ութսունհինգ ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 30112023-08-0045 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Ռասկատյան փողոց 1 շենք թիվ 34 հասցեի բնակարանը 2012 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2012 թվականի մայիսի 18-ի թիվ 1205-Ա որոշում):

գ) Շիրակ Գյումրի Ռասկատյան փողոց 1 շենք թիվ 34 հասցեում հաշվառված են քաղաքացիներ՝ Վիոլետա Համբարձումի Սերարդարյանը 2012 թվականից, Լուսյա Բարսեղի Թորոսյանը 2012 թվականից, Վարդուհի Համբարձումի Սերարդարյանը 2012 թվականից, Լևոն Գալուստի Նորոյանը 2013 թվականից, Միքայել Հրաչյայի Ավագյանը 2015թվականից, Վյաչեսլավ Չիգարևը 2021 թվականից, բնակվում է վեց անձ (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 16-ի N 230643064640 տեղեկանք, 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Արատտա» համատիրության Ե/020/23 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Վիոլետա Համբարձումի Սերարդարյանի, Լուսյա Բարսեղի Թորոսյանի, Վարդուհի Համբարձումի Սերարդարյանի, Վյաչեսլավ Իվանի Չիգարևի, Մարիաննա Իվանովնա Չիգարևի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր նրանց կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի 15-ի N ԱՏ-15112023-99-0565 տեղեկանք):

ե) Քաղաքացի Լուսյա Բարսեղի Թորոսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Ռասկատյան փողոց 1 շենք թիվ 34 հասցեի բնակարանը վարձակալել է 2012 թվականի մայիսի 18-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Լուսյա Բարսեղի Թորոսյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը բավարարեց :

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Ռասկատլյան փողոց 1 շենք, թիվ 34 հասցեի 85.66 (ութսունհինգ ամբողջ վաթսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Լուսյա Բարսեղի Թորոսյանին ծնված՝ 1953 թվականին,
   2) Վարդուհի Համբարձումի Սերարդարյանին ծնված՝ 1990 թվականին,
   3) Վիոլետա Համբարձումի Սերարդարյանին ծնված՝ 1985 թվականին,
   4) Մարիաննա Իվանովնա Չիգարևային ծնված՝ 1988 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Լուսյա Բարսեղի Թորոսյանին, Վարդուհի Համբարձումի Սերարդարյանին, Վիոլետա Համբարձումի Սերարդարյանին, Մարիաննա Իվանովնա Չիգարևային :
4. Քաղաքացիներ՝ Լուսյա Բարսեղի Թորոսյանին, Վարդուհի Համբարձումի Սերարդարյանին, ՎիոլետաՀամբարձումիՍերարդարյանին,ՄարիաննաԻվանովնա Չիգարևային իրազեկել սույն վարչակա նակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Լուսյա Բարսեղի Թորոսյանին, Վարդուհի Համբարձումի Սերարդարյանին, Վիոլետա Համբարձումի Սերարդարյանին, Մարիաննա Իվանովնա Չիգարևային պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2024թ. Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունվարի 2024 **թվական** N 245-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՓԵՆԻԿ ՎԱԼՈԴԻ ՎԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմեն Ջուլբերտի Խոցանյանը (անձնագիր՝ AR 0368804, տրված՝ 11.07.2017թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Խորենացու 26 շենք 48 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Արփենիկ Վալոդի Վանյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի սեպտեմբերի 29-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 30 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Արփենիկ Վալոդի Վանյանին որպես սեփականություն:

Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 1-ի թիվ 1149-Ա որոշմամբ քաղաքացի Արփենիկ Վալոդի Վանյանի հետ կնքվել է Գյումրի համայնքի Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 30 հասցեի 74.64 (յոթանասունչորս ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի վարձակալության պայմանագիր անորոշ ժամկետով ամսական 746.40 (յոթ հարյուր քառասունվեց դրամ քառասուն լումա) վարձավճարով, որն ստացել է նոտարական վավերացում և պետական գրանցում (հիմք՝ 06.07.2015թ. սեղանամատյանում գրանցված №6875 վարձակալության պայմանագիր և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական №09072015-08-0012):

Դիմումին կից ներկայացվել է №09072015-08-0012 վարձակալության վկայականի պատճենը, սեղանամատյանում գրանցված №6875 վարձակալության պայմանագրի պատճենը, Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 1-ի N 1145-Ա որոշման պատճենը, 2023 թվականի սեպտեմբերի 25-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյա թիվ 230651065933, 2023 թվականի սեպտեմբերի 29-ի «Ավրորա» համատիրության տեղեկանքները, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի սեպտեմբերի 20-ի եզրակացությունը, Արփենիկ Վալոդի Վանյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 30 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, տեղեկանք գույքի վարձակալության վճարումների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի սեպտեմբերի 29-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունիսի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արփենիկ Վալոդի Վանյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

### 1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 30 հասցեի 74.64 (յոթանասունչորս ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 25112014-08-0028 վկայական):

բ) Շիրակ Գյումրի Գարեգին Ա փողոց 8 շենքի թիվ 30 հասցեում հաշվառված բնակվում է՝ Արփենիկ Վալոդի Վանյանը 1980 թվականից, (հիմք՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ թիվ 230651065933 և 2023 թվականի սեպտեմբերի 29-ի «Ավրորա» համատիրության տեղեկանքներ):

գ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի՝ Արփենիկ Վալոդի Վանյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ; Նրա անվամբ 1998թ. առ այսօր Գյումրի ք. Գարեգին Ա-ի փողոց 8 շենք, թիվ 30 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ 09.07.2015թ.գրանցված է վարձակալության իրավունք (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի սեպտեմբերի 25-ի N ՍS-25092023-99-0784, 2024 թվականի հունվարի 24-ի ՍS-24012024-99-1174 տեղեկանքներ):

դ) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա 8 շենքի թիվ 30 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի սեպտեմբերի 20-ի եզրակացություն ):

ե) Քաղաքացի Արփենիկ Վալոդի Վանյանը Գյումրու Գարեգին Ա փողոց 8 շենքի թիվ 30 հասցեի բնակարանը վարձակալել է 2015 թվականի հուլիսի 1-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

### 2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ

ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը
ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու

բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Արփենիկ Վալոդի Վանյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Չեղյալ ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 1-ի «Քաղաքացի Արփենիկ Վալոդի Վանյանի հետ Գյումրի համայնքի Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 30 հասցեի բնակարանի վաձակալության պայմանագիր կնքելու մասին» N 1149 որոշումը:
2. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 30 հասցեի 74.64 (յոթանասունչորս ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Արփենիկ Վալոդի Վանյանին ծնված՝ 1957 թվականին որպես սեփականություն :
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Արփենիկ Վալոդի Վանյանին :
4. Քաղաքացի՝ Արփենիկ Վալոդի Վանյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին ՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արփենիկ Վալոդի Վանյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

**2024թ. Գյումրի համայնք** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<30>> հունվարի 2024 թվականի N 244-Ա

## ԱՍՏՂԻԿ ՌՈՒԲԵՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Աստղիկ Ռուբենի Մինասյանի 2024 թվականի հունվարի 29-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Աստղիկ Ռուբենի Մինասյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնականի պաշտոնում՝ 2024 թվականի փետրվարի 1-ից:

**2.** Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 253.000 ( երկու հարյուր հիսուներեք հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աստղիկ Ռուբենի Մինասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2024թվականի N243- Ա

## 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանի 1-ին կետով հաստատված N 2 հավելվածի 8.1-ին և 8.4-րդ կետերով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ .

1. Հաստատել 2024 թվականի հունվարի 30-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետների և առաջատար մասնագետների համայնքային ծառայության ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

30.01.2024

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
2024 թվականի հունվարի 29-ի N 243-Ա որոշման

ԿԱԶՄ

# 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Նալբանդյան Հարություն - ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական,
2. Աղաբեկյան Գնունի - ՀՀ Շիրակի մարզպետի օգնական,
3. Ջիլավյան Լենա – ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,
4. Ալեքսանյան Շողիկ - ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ,
5. Հովհաննիսյան Սոնա - ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամ, «Բալասանյան դաշինք» խմբակցություն,
6. Կուրազյան Օֆելյա – <<Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան>> հիմնադրամ, ասիստենտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

***ՈՐՈՇՈՒՄ***

***«29» հունվարի 2024թվական N 242 - Ա***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՍԵՐՈԺԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ)

**I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ**

Քաղաքացի Գայանե Հենրիկի Գևորգյանը (անձնագիր՝ AR0370472, տրված՝ 12.07.2017թ., 016-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Շիրակացի փողոց 56 շենք, 26 բնակարան հասցեում),ով լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Արթուր Սերոժի Մարտիրոսյանի անունից(այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի մայիսի 12-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Կազաչի պոստ թիվ 119 բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի Արթուր Սերոժի Մարտիրոսյանին որպես սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մայիսի 10-ի Շ-1153/131 գրությունը, ՀՀ ՆԳՆ ՄՔԾ անձնագրային և վիզաների վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 11.12.2023թ. № 8/62-2503 տեղեկանքը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ 12.12.2023թ. տեղեկանքը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 20.03.2019թ. եզրակացությունը, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի տեղեկանքը, քաղաքացիներ Արմեն Արթուրի Մարտիրոսյանի, Լարիսա Գալուստի Մարտիրոսյանի և Սերյոժա Արթուրի Մարտիրոսյանի կողմից տրված հրաժարականը Գյումրի համայնքից Կազաչի պոստ թիվ 119 բնակելի տունը նվեր ընդունելու վերաբերյալ, քաղաքացիներ Արթուր Սերոժի Մարտիրոսյանի և Սերյոժա Արթուրի Մարտիրոսյանի նույնականացման քարտերի պատճենները,քաղաքացի Արթուր Սերոժի Մարտիրոսյանի ծննդյան վկայականի պատճենը,Արթուր Սերոժի Մարտիրոսյանի լիազորագիրը տրված Գայանե Հենրիկի Գևորգյանին Գյումրի համայնքից Կազաչի պոստ Ֆիննական 119 տանն սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդհոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի օգոստոսի 4-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արթուր Սերոժի Մարտիրոսյանի լիազորված անձ՝ Գայանե Հենրիկի Գևորգյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք.Կազաչի պոստ թաղամաս 119 բնակելի տուն հասցեի 66.15 (վաթսունվեց ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 13032019-08-0026 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Կազաչի պոստ թաղամաս 119 ֆիննական տան հատկացման նյութերը չեն պահպանվել (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մայիսի 10- ի Շ-1153/131 գրությունն):

գ) ք.Գյումրի Կազաչի պոստ թաղամաս 119 հասցեում հաշվառված բնակվում են Արթուր Սերոժի Մարտիրոսյանը, Լարիսա Մարտիրոսյանը, Սերյոժա Մարտիրոսյանը և Արմեն Մարտիրոսյանը (հիմք՝ «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ 12.12.2023թ. տեղեկանք):

դ) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամաս թիվ 119 ֆիննական տան տեխնիկական վիճակը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 20.03.2019թ. տեղեկանք)

ե) Քաղաքացի Արթուր Սերոժի Մարտիրոսյանի անվամբ ՀՀ տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոհիշյալ քաղաքացիների անվամբ ՀՀ տարածքում 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 22/11/2023 թ. № ՍՏ-22112023-99-0471 տեղեկանք):

զ) Քաղաքացի Արթուր Մարտիրոսյանը «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» էլեկտրական ցանցի բաժանորդ է հանդիսանում 2002 թվականից մինչ օրս (հիմք՝ «ՀԷՑ» ՓԲԸ–ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի տեղեկանք):

է) Քաղաքացիներ Արմեն Արթուրի Մարտիրոսյանը, Լարիսա Գալուստի Մարտիրոսյանը և Սերյոժա Արթուրի Մարտիրոսյանը հրաժարվել են Գյումրի համայնքից նվեր ընդունել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ ֆիննական թիվ 119 հասցեում գտնվող անշարժ գույքը:

ը) Քաղաքացի Արթուր Սերոժի Մարտիրոսյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ

համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Արթուր Մարտիրոսյանի լիազորված անձ՝ Գայանե Գևորգյանի դիմումը բավարարեց:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք.Կազաչի պոստ թաղամաս 119 բնակելի տուն հասցեի 66.15 (վաթսունվեց ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Արթուր Սերոժի Մարտիրոսյանին ծնված 1963 թվականին

որպես սեփականություն:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Արթուր Սերոժի Մարտիրոսյանին:
3. Քաղաքացի՝ Արթուր Սերոժի Մարտիրոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արթուր Սերոժի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

*2024թ.ք.Գյումրի*

*Վ.Սամսոնյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *ՈՐՈՇՈՒՄ*

***«29» հունվարի 2024թվական N 241 - Ա***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՎԵՏԼԱՆԱ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ, ԱՆՈՒՇԻԿ ԼԵՌՆԻԿԻ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՌՆԻԿԻ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԻԱՄ ԼԵՌՆԻԿԻ ԷԼԲԱԿՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ)

## I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սվետլանա Էլբակյանը (անձնագիր AP0669203, տրված՝ 11.01.2017թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Մ.Ավետիսյան փողոց 9 շենք թիվ 32 հասցեում (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի նոյեմբերի 15-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Մ.Ավետիսյան փողոց 9 շենք թիվ 32 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

ՀՀ Գյումրու քաղաքապետի 1998 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ Մ.Ավետիսյան փողոց 9 շենքի թիվ 32 բնակարանը հատկացվել է Լերնիկ Էլբակյանի 5 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն՝Լերնիկ Էլբակյանին, կնոջը՝ Սվետլանա Էլբակյանին,տղային՝ Հովհաննես Էլբակյանին և աղջիկներին՝ Անուշիկ Էլբակյանին ու Մարիամ Էլբակյանին և տրվել է թիվ 32 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է ՀՀ Գյումրու քաղաքապետի 1998 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ տրված թիվ 32 օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 10-ի տեղեկանքը, «Նոր Անի» համատիրության 2023 թվականի նոյեմբերի 13-ի տեղեկանքը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության տնտեսական վարչության 27.01.2023թվականի 20/87 տեղեկանքը, Լերնիկ Ժորժիկի Էլբակյանի մահվան վկայականի պատճենը, Սվետլանա Պատվականի Էլբակյանի և Մարիամ Լեռնիկի Էլբակյանի անձնագրերի պատճենները,Հովհաննես Լեռնիկի Էլբակյանի և Անուշիկ Լեռնիկի Էլբակյանի լիազորագրերը տրված քաղաքացի Սվետլանա Էլբակյանին, քաղաքացիներ Լերնիկ Ժորժիկի Էլբակյանի և Սվետլանա Պատվականի Էլբակյանի ամուսնության վկայականի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի նոյեմբերի 15-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի հունվարի 23-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Սվետլանա Էլբակյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2.ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Ք.Գյումրի, Մ.Ավետիսյան փողոց 9 շենքի թիվ 32 հասցեի 61.85 (վաթսունմեկ ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1377387 վկայական):

բ) Ք.Գյումրի, Մ.Ավետիսյան փողոց 9 շենքի թիվ 32 հասցեի բնակարանը 1998 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ ՀՀ Գյումրու քաղաքապետի 1998 թվականի հոկտեմբերի 16-ի որոշում):

գ) Ք. Գյումրի, Մ.Ավետիսյան փողոց 9 շենքի թիվ 32 բնակարանում հաշվառված են՝ Սվետլանա Պատվականի Էլբակյանը 2004 թվականից, Հովհաննես Լեռնիկի Էլբակյանը 2008թվականից, Մարիամ Լեռնիկի Էլբակյանը 2011 թվականից, (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 10-ի տեղեկանքը):

դ) Ք. Գյումրի, Մ.Ավետիսյան փողոց 9 շենքի թիվ 32 բնակարանում հաշվառված բնակվում են Սվետլանա Պատվականի Էլբակյանը, Մարիամ Լեռնիկի Էլբակյանը և Հովհաննես Լեռնիկի Էլբակյանը (հիմք՝ «Նոր Անի» համատիրության 13.11.2023թ տեղեկանք):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Սվետլանա Պատվականի Էլբակյանի, Մարիամ Լեռնիկի Էլբակյանի,Հովհաննես Լեռնիկի Էլբակյանի և Անուշիկ Լեռնիկի Էլբակյանի (հիմք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 06/11/2023 թ. №US-06112023-99-0274 և № US-06112023-99-0261 տեղեկանք) անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր նրանց կողմից կնքված անշարժ գույքի օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

զ) Քաղաքացի Սվետլանա Էլբակյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Մ.Ավետիսյան փողոց 9 շենքի թիվ 32 հասցեով բնակարանը վարձակալել է 1998 թվականի հոկտեմբերի 16-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Սվետլանա Պատվականի Էլբակյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ք.Գյումրի Մ.Ավետիսյան փողոց 9 շենքի թիվ 32 հասցեի 61.85 (վաթսունմեկ ամբողջ ութսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Սվետլանա Պատվականի Էլբակյանին ծնված 1961 թվականին
2) Մարիամ Լեոնիկի Էլբակյանին ծնված 1995 թվականին
3) Անուշիկ Լեոնիկի Էլբակյանին ծնված 1979 թվականին
4) Հովհաննես Լեոնիկի Էլբակյանին ծնված 1984 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Սվետլանա Պատվականի Էլբակյանին, Մարիամ Լեռնիկի Էլբակյանին, Անուշիկ Լեռնիկի Էլբակյանին, Հովհաննես Լեռնիկի Էլբակյանին:

3. Քաղաքացիներ Սվետլանա Պատվականի Էլբակյանին, Մարիամ Լեռնիկի Էլբակյանին, Անուշիկ Լեռնիկի Էլբակյանին, Հովհաննես Լեռնիկի Էլբակյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սվետլանա Պատվականի Էլբակյանին, Մարիամ Լեռնիկի Էլբակյանին, Անուշիկ Լեռնիկի Էլբակյանին, Հովհաննես Լեռնիկի Էլբակյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

*2024թ.ք.Գյումրի* *Վ.Սամսոնյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվարի 2024 **թվականի** N 240-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԵԼԻՆՍԿՈՒ ՓՈՂՈՑ N 3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 56.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (47.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հակոբ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 1080602 տրված 2005 թվականի մարտի 1-ին ) Գյումրի քաղաքի Բելինսկու փողոց N 3 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 56.0 (հիսունվեց) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Հակոբ Սիմոնյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Հակոբ Սիմոնյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 23-ին N 22853 թվագրմամբ ) հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023PDWLDZ ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Հակոբ Սիմոնյանին (ծնված 1955 թվականի ապրիլի 27-ին) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Բելինսկու փողոց N 3 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 56.0(հիսունվեց) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 129696(մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հակոբ Սիմոնյանի պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից::
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.01.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2024 **թվականի** N 239-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ N $6^{գ}$ ՀԱՍՑԵԻ 801.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 205.63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

